

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 ֆր.
Վեցամսեայ 6 «

ՍՐՏԱՍԱՀԱՐՆ
2 թիւ Վեկ ծրարով
Տարեկան 14 ֆր.
Վեցամսեայ 7 «


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տղ.
Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

— 0 —

Ծանոցման տղր
20 ամսով



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԵ

Rédaction du journa

„Ipravounk“

V A R N A (Bulgarie)

— 0 —

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

— 0 —

Դրուքիւնիս
չին տղր

ՍԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ



Հայ ժողովուրդի ամեն դասա-
կարգերէն բաղձացուած Միու-
թեան խնդիրը ուրախ ենք որ այ-
ժմ ամեն ժամանակէ աւելի լուծ-
ուելու յոյս կը ներշնչէ մեզ :

Մ. Նահանգներու եւ Պուլկա-
րիոյ շատ մը քաղաքներուն մէջ
դէպի միութեան գաղափարը հե-
տզետէ ծաւալ գտած ժողովուրդի
խմբական ու անհատական շահե-
րուն վերջապէս կը յաջորդէ վեր-
ջնչ. Յիշ. կուսակցութեան պաշտօ-
նական յայտարարութիւնը, որով
երբեմն Սուլթանին ու ամբողջ
թուրքիոյ սարսափ ազդող այդ
մարմինը պատրաստակամութիւն
ցոյց կուտայ Միութեան սիրոյն
համար սպասուածէն աւելի մեծ
հետեւեալ զոհողութիւնները ընել :

1. Ջնջել «Հնչակեան կուսակ-
ցութիւն» անունը :

2. Դադարեցնել պաշտօնական հր-
րատարակութիւնները :

3. Կեդրոնական վարչութիւնը
ի հարկին անբողջապէս հրաժա-
րել :

4. Պատուոյ խօսք կենդ. վար-
չութեան կողմէ ապագայ միաց-
եալ մարմին վարչութեանը մէջ
ու եւ պաշտօն շտապանքնել :

5. Եթէ կան դեռ մեծ ու փոքր
զոհողութիւններ, կանխաւ կըն-
դուին զանոնք ալ :

Կարծենք այս աստիճան որոշ
զոհողութիւններ ընելու հաճութիւ-
նը Հնչ. կուսակցութեանն ոչ ոք
չէր սպասեր : Այդ կուսակցու-
թեան ամենէ մեծ հակառակորդը
եղող մոլի դաշնակցական մը իսկ
համարձակութիւնը չպիտի ունե-
նար այս զոհողութիւնները մէկէն
առաջարկելու անոր բայց ահա
Հնչակեաններու նոր կեդրոնը ինք-
նաբերաբար պատրաստակամու-
թիւն ցոյց կուտայ ամեն բան գո-
հել ի սէր բաղձացեալ Միութեան.
Եւ որպէսզի այդ միութիւնը իրա-
կան ու անական ըլլայ կուսակցու-
թեան պայմանի, երկու կող-
մէն ալ համաձայնաւոր եւ անսահ-
ման զոհողութիւններ ընել :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Թիշառակագիր .

Ը.

Մնայուն վերաքննիչ յանձնաժողով

Բ. Դրան մէջ պիտի հաստատ-
ուի մնայուն վերաքննիչ յանձնա-
ժողով մը, պաշտօն ունենալով բա-
րենորդման ճշդիւ գործադրու-
թեանը հսկել :

Այս յանձնաժողովը իրեն նախա-
գահ պիտի ունենայ կայսրութեան
մէկ բարձր պաշտօնեան, զին-
ուորական կամ քաղաքական : Վեց
անդամներէ պիտի բաղկանայ, ո-
րոնք պիտի ընտրուին երկրին քա-
ղաքական բարձր պաշտօնեանե-
րէն վարչական, գաղափարեւ եւ
լեւազանական ձեռնհասութեամբ օժ-
տուած. ասոնց երեքը Մահմետա-
կան եւ երեքը Քրիստոնեայ պիտի
ըլլան :

Թանձնաժողովը Բ. Դրան մէջ
պիտի գումարուի, գոնէ ամիսը
անգամ մը :

Պաշտօն պիտի ունենայ

վերահսկել օրէնքներուն եւ կա-
նոններուն ճշդիւ գործադրութեա-
նը. վարչութեան մէջ պատահած
անկանոնութիւնները հաստատելէ
յետոյ Դրան ցոյցտալ, նոյնպէս պար-
տաւոր զանազալ պաշտօնեանեւ ո.

խնդրագրեր ընդունիլ եւ քննել
ժողովագրեալ փափաքը ու տրտու-
նեքը, այնպէս որ հասարակու-
թեանց ներկայացուցիչներէ գա-
լիք բոլոր տեղեկագիրները կրնան
իրեն (յանձնաժողովին) ուղղուիլ :

Դիւանատունները, իրենց թարգ-
մաններուն միջոցաւ, ուղղակի յանձ-
նաժողովին կը զրկեն հարկ դատուած
բոլոր ծանօթագրութիւնները ու
տեղեկութիւնները :

Թանձնաժողովը կրնայ վաղեմե-
րէն տեղեկագիրներ ուղղել իրեն
քննութեանը ենթարկուելիք խնդ-
րիւններուն վրայ : Տարին երկու
անգամ ընդհանուր կառավարիչնե-
րը պարտաւոր են բանտերու վի-
ճակի մասին իրեն մանրամասն տե-
ղեկագրութիւններ մատուցանել :

Եւր պէտք տեսնէ, իր մէջէն
մէկ կամ աւելի անդամներ կընտ-
րէ նահանգներու մէջ բնական

պտոյտներ ընելու համար :

Այս բոլոր խնդիրներուն համար
ինք (յանձնաժողովը) տեղեկագիր-
ներ պիտի մատուցանէ Բ. Դրան
եւ իրաւունք պիտի ունենայ ուղ-
ղակի թղթակցութիւն կատարելու
վարիներուն եւ նախարարական ձե-
ռնհաս պաշտօնատուներուն հետ :

Թ.

Սաւառնի, Տալուրիկի և աւաշնի դեպ-
քերէն վնասուած Հայերուն ընդ-
շիք հատուցումները

Այն Հայերը որոնք Սաւառնի,
Տալուրիկի եւ աւաշնի դեպքերէն անձ-
նապէս կամ ներթափառ ֆուսուե-
ցան տուգանք եւ հատուցում պի-
տի ստանան :

Վերահսկող Կայս Բարձր Գօ.
միւսքը պաշտօն պիտի ունենայ
այս մասին հետազօտութիւններ
կատարելու եւ պէտք եղած միջոց-
ները ձեռք առնելու :

Ժ.

Կրօնափոխութիւնը

Բ. Դրան պիտի հսկէ որ կրօ-
նափոխութիւնը եթէ ըլլան, 1856ի
խաթիւր Հիւսնայունով (յօդ. 10,
11, 12) հաստատուած սկզբունք-
ներուն բոլոր ապահովութիւնները
կրնան շատ անգամ գործնականի
չիրթան, կրօնափոխ ըլլալ ու գող-
անձինք չափահաս ըլլալու են եւ
ասոնց չի թոյլատրուի իրենց կը-
րօնափոխութեան յայտարարութիւ-
նը ընելու, մինչեւ որ շարաթի
մը չափ իրենց պատկանած կրօնա-
պետին վերին հսկողութեան տակ
չի դրուին :

ԺԱ.

Պահպանումն Հայոց առանձնա-
շնորհումներուն

Բ. Դրանը կարուկ հրահանգներ
պիտի տայ իշխանութիւններուն,
օրինաց եւ հայ եկեղեցականու-
թեան ու հասարակութեան 1863ի
Սահմանադրութեան եւ Սուլթան-
ներէ տրուած պէրաթներուն ա-
ռանձնաշնորհմանց դէմ օրինազան
ցութիւններու կրկնումը արգելե-
լու համար :

ԺԲ.

Ասիական թուրքիոյ ուրիշ նա.
հանգանակներն Հայոց վիճակը

Ասիական թուրքիոյ ուրիշ նա.
հանգանակներն մէջ, ուր հայ հաստ-
րակութիւնը ինչ ինչ սոսկապէս
ընդհանուր ժողովուրդին մէկ
նշանակելի մասը կը կազմէ, վա-
րի ժողով մասնաւոր քրիստոնէիայ
պաշտօնի մը պիտի գրուի որ
պաշտօն պիտի ունենայ Հայոց ի.
րաւունքներուն հսկելու: Այս պաշ-
տօնեան հայ հաստարակութեան
խնդրագրերը պիտի ընդունի և զա-
նազ պիտի հայտնէ վարիին, որ,
անոր հետ համաձայնութեամբ
զարգանան պիտի տնօրինէ:

Այս պաշտօնեան ի մէջ այլոց,
կանաւորութեան տնօրինողները
պիտի զրկէ վերաբնիչ միտքին
Յանձնաժողովին ի կ. Պոլսի:

Այն վիճակներուն մէջ, ուր
տեղեր կան որ Հայերը ժողովր-
դեան մեծամասնութիւնը կը կազ-
մեն, ինչպէս Հոնքոն (Ատանա նա-
հանգի մէջ) կամ Չէյթան (Հայէ
պի նահանգին մէջ) եւայլն, այդ
վարչական բաժանումը պիտի բա-
րեփոխուի և բարենորոգմանց ծը-
րագրին զիջականութեամբ կազմու-
թեան համար ունեցած տրամա-
դրութիւնները պիտի գործողը-
րուն: Երբեք տեղեկութեան վրայ
չսկան զատ կազմակերպութիւն
հաստատուի:

(Շարունակելի)

ԵՐԿՈՒ ՍԽԱԼ ՀԱՍԿՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՒ

ՆՈՐ ՈՒՂԻՆ

(Շար. Ասիական թուրքիոյ ուրիշ նա.)

Յեղափոխական բանակի երիտա-
սարգներն, որ զոհեցին իրենց կեանքն
ու ապագան տառապանքի տարիէ ի
վեր, միեւնոյն անձնու իրութեամբ
ու ժաշտութեամբ, ձեռք ձեռքի
տուած հոգի գրգռեցին և ուսուցչին
հետ, պէտք է օգնեն իրենց: Ազգը այս
Նոր Ուղին, պատրաստելու համար
զայն, ու քարոզելու համար, բոլոր-
րացու մը անոր մտաւորական ու տըն-
տեսական տեսլիկանքը վիճակին: Այժմէն
ի ինչք պէտք է տանալ իրաւունքներն
ընդհանրապէս և իրենց հետ և իրենց
ժողովուրդինը աշխատանքի ունեն-
ն:

Սուլթանը երկու տարուան մէջ ու-
նեցանք տուաւ ազգութեան անձնէն
ուժեղ ու երիտասարդ բանակը, մօտ
200,000 հոգի: Բայց ան չափաւոր-
բանած էր թէ սենցող ազգ ենք և
գոյնէ քիչ անհոգի այդ կորուստ գար-
մանու էր. ուստի կատարի սրտմը-
տութեամբ (խոստովանինք սակայն
տարբերակ հաշտագիտութեամբ) ա-
ւարել տուաւ ազգային քանի մը հար-
իւր միջոցն հարստութիւնը, որ մեր
ազգի մտաւոր, բարոյական զարգաց-
ման ու անցումի հիմը կը կազմէ: Եւ
սակայն զիստ ատենք չեն մեր միակ
կորուստները: զիստ ու հակառակ
կորուստը ազգային կենդանական
ուժի սպանութիւնն է: Արհեստը,
հողագործութիւնն ու առեւտուրը,
որ Հայուն ձեռքն էր անցած ինչ ոչ
է ի վեր, այսօր մնացած է մեզ հա-

մար ու անցաւ թրքաբնակ ուրիշ տար-
րերուն: Այնպէս որ եթէ վաղը մար-
գաբնական հրաշքով Հայաստանի մէջ
բարենորոգում մը նոյն իսկ լինէր,
անկէ մենք չէ որ պիտի օգտուէինք
անմիջապէս, այլ Հրէաները, Պար-
սիկները, Չէրքէզ ու քիւրտ պէկերն
ու մանաւանդ Եւրոպացիները: Մեր
հին առեւտրականներն ու արհեստա-
ւորներ անակացած, ու նոր երի-
տասարդութիւնը յեղափոխութիւն մի-
այն ուսած, զատապարտուած պիտի
մնայինք զուտ բանտարկան վիճակին
(բրտէթարիւս), այսինքն մշտնջենա-
կան թշուառութեան ու ազգային ա-
ւելի զգալի անձնապահութեան մը:
Եթէ օր մը, քաղաքական փոփոխու-
թիւններու բերումով, եւրոպական
պետութիւնները ստիպուած ըլլային
բանալ Սրբեկեան խնդիրը, այնու
պէտք չէ յուսալ թէ անոնք պիտի
կարեն ծածկելն: Եւ մեզ տալու հա-
մար սուր ու զեկը, այդ միջամտու-
թիւնը պիտի ըլլայ կամ Տաճկաստան
իրենց մէջ բռնկուլու համար և կամ
բարեփոխութիւն ներհանգում լոկ ի-
րենց շահուն համապատասխան: Ար-
դէն Պէոյիւնի գաշնագրութեան արա-
մադրութիւնն ու մեր յեղափոխու-
թիւններէն միակ Եւրոպացիները
օգտուեցան, և այն առաւելութիւն-
ները զոր Հայերուն մէջ մեծ մասը կը
վայելէր, անցան զխաւարարար Հը-
րէաներուն, Գերմանացիներուն ու
Ֆրանսացի մոլեռանդ կրօնաւորներուն
ու կեղծեղ զբաւառներէն: Անոնք
Մեր մեծ կոտորածի մեղաւորութեան
զինն ալ երկու տարի առաջ այդ եր-
կու ազգերը ստացան. այն է Գաղա-
թայէն մինչեւ Պարսիկ ծոցը չինու-
րեք երկաթուղային գծին չինութեան
արտօնութիւնը: Այդ հակառակ էր,
որ կոչուած է հիմնապէս բարեփոխել
Տաճկաստանի առեւտրական ու տնտե-
սական վիճակը, թշուառութեան ու
սեփականագրութեան դատի մը պիտի
ըլլայ միայն կրիլիկայի ու Հայաս-
տանի մէջըն, եթէ աչքերին չը
բանանք ու չը պատրաստուինք օգ-
տուիլ անկէ: Եւ յեղափոխութիւնը գո-
ւէ օգտակար նպատակի մը ծառայած
կրնայ ըլլալ եթէ սփռուի ուղեւոր,
այն տեսնեալ հազար հայ երիտա-
սարգները, որ ցրուեցան Ամերիկա ու
Եւրոպա, ոչ միայն պէտք է պահեն
ազգայնութիւնը, այլեւ յանուն Հա-
յաստանի ճշմարիտ ազատագրութեան,
պէտք է օգնեն իրենց միջնաւորէն
ու յանուն սոյվիլ արհեստներ, հզա-
ղործութիւն, պետութիւն ու լեզու:
Ինչքան ալ այսօր Տաճկիւնը ջանան
խլել մեր ձեռքէն նախնական ար-
հեստները, ապագային ստիպուած
պիտի ըլլան տեղի տալ մեր գիտու-
թիւնը, մանաւանդ եւրոպացիները
պիտի ճանչնան մեր օգտակարութիւնն
ու առաւելութիւնները: Այն անպէս
գումարները որ կը ծախսուին անպէ-
տօրէն մանածիկներու գանձարաննե-
րէն, իլ եւս պէտք է օգնանուն ին
հայ որբերուն անուցումին և խնա-
ղի, աղքատ երիտասարդութեան կը-
թութեանը, Եւրոպայի ու Ամերի-
կայի արհեստագիտական զարգացումն
մէջ: Հայ հարուստներուն պարտա-
կանութիւնը այսօր կը ներկայանայ
ցոյց տալ իրենց հայրենասիրութեան
աստիճանը, փոխանակ ունանքն ա-
զատութիւններու, զոր կը սիրէին
ուղղիլ յեղափոխականներուն հասցէին,
որ սակայն զոհողութեամբ գիրազան-
ցապէս բարձր եղանք:

Ինչ պնդում Հայաստանը բացարձա-
կապէս անկախ պետութիւն մը եղած
է, միշտ հպատակութիւն մը ունե-

ցած է զրացի հզոր տիրապետութեան
մը առջեւ. իր աշխարհակալութիւնը
կայացած է զրացի ազգերուն մտաւո-
րապէս ու առեւտուրով տիրելուն մէջ,
որ ճշմարիտ տիրապետութիւնն է,
և այդ է մեր ազգային կենսական
ոյժը որով պահպանուած ենք մինչեւ
այժմ: Բարեկեցիկ կեանքն և ու-
սուցչի դերն աւելի սիրած ենք քան
թէ քան թէ կողոպտիչ ոստիկանու-
թեան համազգեստը: Հայաստանի հայ
հարկահաւաններն աւելի անգուժ զո-
ղեր կրնան ըլլալ, ինչքան որ թուրք
զաւաթիկն պնդակալէր: Եւ հիւսն հարս-
տացած հայուն առջեւ:

Գիտեմ յակայն որ եթէ արեւելն
տակ արգի հայ երիտասարդութեան
մէջ հաստ ալ մնայ, դարձեալ պիտի
սիրէ երազել նոր Ռուսիոյ մը ծը-
նունդը: Բայց երազը իրականութիւն
չէ. Ռուսիոյ ծնունդն ալ բախտի
խաղը չէր, այլ առնուառն երեք դա-
րու կանխադատարարութեան ու ա-
ջարջութեան արդիւնք: Զինուորա-
կան շարժումէ մը առաջ, առեւտրա-
կան, հողագործական ու մտաւորա-
կան խաղաղ ու ճարպիկ մրցումով
Հայերը զիտցած էին նախապէս սե-
փականազրկել Յոյները, և այդ հրա-
շալի զինին մէջ նոյն իսկ դաւաճան
հոշակուած Օչիւնեաներուն ու՝ Վաս-
պուրականի դատարիք տեղեր՝ Արմ-
րուսիներուն յունաստիկութիւնները
զլիւսուր բաժինը ունին:

Զը յոտանաւորեք, արեւելեան ցե-
ղերու առաջնորդները կրնանք ըլլալ
եթէ ուզենք հետեւիլ մեր ազգային
այս աւանդական ուղիներով: Այդ
հրաշալի քաղաքագիտութիւնն
է որ պէտք է ըլլայ ազգային մեր
նոր Ուղին. անիկա չիտակ պիտի
տանի մեզ բարօրութեան և այն կեղ-
րոնացումին որ օր մը կրնայ իրաւա-
նացնել նոյն իսկ չափ մը օսկի երազ-
ներ:

Ա.Ա.Ս.Ս.

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

... Խմբագիր
Պատու ունիւք ներքինիալ յղիւ
առժամայն թագ. Խորհրդոյ ութամ-
սեայ պաշտօնավարութեան հաշու-
չիւն, խնդրելով ձեր ազնուութիւնէն
որ Խորհրդին մօտագոյն թիւերէն մի-
օր մէջ հրատարակէք զայն, իզի-
տու թիւի Սօփիան գուրա գանուող ազ-
գայնոց եւս:

Թէպէտ բաւական ստեղծ է որ առ-
ժամայնակեայ Խորհուրդս պաշտօնէն
զազրած է, այլ մի զարմանաք
եթէ այսօր միայն կը զրկենք ձեզ ներ-
փակեալ հաշուեկշիւն: Պատճառն այն
է որ ձեր թաղական Խորհրդոյ մը
ընտրութեան կըողակներն, անոր
յանձնելու համար հաշիւներն:

Ընտրութիւնն տեղի ունեցաւ իրօք,
այլ զրկելէ 200 հայ պարունակող
քաղքի մը մէջ առաւելագոյն քուէ ըն-
դունողն 48 քուէով թագ. Խորհրդոյ
անդամ ընտրուած է, իսկ քուէա-
թիւնը չընդունողներուն թիւն չգի-
տենք ճշդիւ թէ որքան է: Ասկէ կը-
նաք հասկնալ թէ, ի չնորս ազգա-
ւոր անձանց, ընտրութիւնն որքան
կանոնաւոր կրնայ ըլլալ: Որով ա-
յս, Սօփիան Հայերն օրինաւոր թագ.
Խորհուրդ չունին, որպէս զի իրեն
ներկայացնելը հաշիւներն ու միջոցն
կը մնայ մեզ ձեր բարեացակամու-
թեան զինել խնդրելով որ գոնէ դուք
հրատարակէք սոյն հաշուեկշիւնը:
Ուստի նախապէս ներկայացնելով
ձեզ մեր շնորհակալութիւնը:

Ի դիմաց հրաժարեալ առժամայն
թագ. Խորհրդոյ
Ասեանապիր
Ասեան
Գաղաթեան
13 սեպ. 901
Սօփիա

ՀԱՇՈՒՆՆԵՐՈՒԹԵԱՆ

Մուտք	Ճր.
Նախորդ Հոգաբարձութեան	
պատրաստ դրամ	5. —
Ամսաւոր քուէ	1480.80
Կառավարութեան տուր	
կան նուէր	600. —
Ս. Մանուկի և Ս. Զատ-	
կի խաչապիւնէ կնքահարու-	
թիւնէ և ի զազիւն	369.85
Թագումէ և միւրութիւնէ	71. —
Մոմերէ, պնակներէ և	
գանձակներէ	420.62 1/2
Հանգանակութիւնէ.	
ներկայացուցէ, նուէրէ և	
պատրաստ	848.75
Պահանջատէրէ զեղ-	
ջուած իր նուէր	285.65
	4081.67 1/2

ԵԼՔ

Նախորդներն մնացած	Ճր.
պարտ վճարուած	2148.40
Պահանջից ամսական	1310. —
Ընդհանուր ու արտա-	
կար ծախք	431.12 1/2
Կեր. Սյոքուլեան, Տէր	
Գեղգին, Տէր Գեղգին	
և Գեղգին վարդապետին,	
պարտէզին համար եղած	
այլ և այլ ծախք	184.90
Պատրաստ դրամ	7.25
	4081.67 1/2

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Տօպրիչի ազգ. վարժարանի շինու-
թիւնէն մնացած պարտոյ բարձման
համար ձեռնարկուած հանգանակու-
թեան մասնակցող ազգայնոց հետեւ-
եալ ցանկը զրկուած է մեզ հրատա-
րակելու խնդրանք:

Վառնայէ հանգանակուած	
Տ. Ս. Ս. Փափագեան	40.
« Բ. Սիւլեյման	40.
« Ս. Գուլամեան	40.
« Արամ Սթանպուլուեան	10.
« Սարգիս	5.
« Բարսեղ	40.
« Ստեփան Տէմիրճեան	20.
« Աւետիս Կիւմարեան	3.
« Ոմէ	3.
« Եղաբար Տիմանեան	5.
« Արշակ և Կարապետ	3.
« Բաժնի Կարապետեան	1.
« Յարութիւն Թիւրեմեան	2.
« Յովհաննէս Յարութեան	4.
« Յակոբ Նալչաճեան	2.
« Թագուր Մարկոսեան	1.
« Եղաբար Իսպիլեան	2.
« Սարգիս Ուղուր, Պողոսեան	5.
« Սիրական Եղիկեան	1.
« Յովհաննէս Զամեան	10.
« Միսակ Թուղանեան	1.
« Յակոբ Թագուրեան	10.
« Կարապետ Սանտալեան	2.
« Սարգիս Գաբրիէլեան	20.
« Յ. Էնկիլպարեան	5.
« Մ. Թովմասեան եղբարք	10.
« Մատթիոյ Ռուքիսեան	8.
« Ստանէթ Տաքեան	3.

Գումար 296. —

Փոխադրեալ	296.
« Էդիթէզէր Արտիթ և ուրիշ »	10.
« Սիմոն Սամուէլեան »	2.
« Կ. Մինասեան »	2.
« Կ. Շիրինեան »	2.
« Եռնէֆ և Կէրոն »	10.
« Նաուս »	5.
« Կ. Չապմագլեան »	1.
« Եղբարք Կէնոֆ »	19.
« Յովնէֆ Բարսաբեան »	5.
« Սարգիս Քերտեան »	20.
« Հայկ Գրիգորեան »	3.
« Գէորգ Եսայազեան »	5.
« Կ. Կ. Փափագլեան »	40.
« Ալէքսան Թորոսեան »	6.
« Յարութիւն Ապաճեան »	3.
« Կարապետ Աճէմեան »	5.
« Սրապէա Շէքէբեան »	1.
« Յարութիւն Թէրզեան »	1.
« Յ. Ս. Փափագլեան »	10.
« Աւետիս Զարգանէլեան »	1.
« Հաճօրեան Եղբարք »	5.
« Պետրոս Նիկողոսեան »	3.
« Սէրոն Գրիգորեան »	2.
« Կարապետ Սիմոնեան »	1.
« Հ. Մուրադեան »	1.
« Մ. Թ. Տէմիրճեան »	1.
« Ա. Էնկիպարեան »	1.
« Ա. Ազիզեան »	10.
« Խաչիկ Տամատեան »	20.
« Միքայէլ Գապատեան »	10.
« Բիւրիպոս Հալաճեան »	5.
« Գրիգոր Էթմէճեան »	10.
« Յակոբ Մէրտինեան »	5.
« Առաքէլ Օտարաշեան »	10.
« Մովսէս »	10.
« Ա. Աբէլեան »	5.
« Ա. Շիրինեան »	2.
« Սիմոն Մարինեան »	5.
« Գալուստ Աւագեան »	4.
« Հրանդ և Միհրան »	5.

Գումար 553.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

«Անահիտ»-ի վերջին թիւին մէջ
կը կարդանք հետեւեալ լուրերը .
Պ. Տընիս Բօշէն, ա՛զգամ
Ֆրանքօճայկական ընկերութեան,
որոշած է խորհրդարանին բացման
Պէզիկ ճեման :

ԹԵՐԹՕՆ «ԻՐԱՆԻՆԻՔ»-ի (16)

ԳՆՈՒՆԻ

(ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

Թէպէտ եւ վերոյիշեալ խմբի գիրքերու մէջ նա-
խապէս յաջողութիւն էին ստանալը, հրապարակելու
կարեւոր պատճառներով թիւներու մնացածը, սակայն
բաւական չէին ամենքն ալ, հետեւաբար
Կոնստանտնուպոլիսէն Կոնստանտնուպոլիս
Կոնստանտնուպոլիսէն Կոնստանտնուպոլիս

Ու ցոյցին օրերը կը մօտենային : Արուար
ձաններու բոլոր խումբերը, որոնք՝ կ'ընդունական
կօմիտէի բացառութեամբ՝ ենթադրեալներ կը
կոչուէին, ներքին կերպով իրարու կապուեցան եւ
իրարու հետ յարաբերութեան սկսան : Ասիկա ա-
պակեցրեց զանոս հակառակիչ գրութեան ուղղու-
թիւնն էր անշուշտ :

Կը խոստովանենք թէ անկարգաւոր էր ոգե-
որութիւնը բոլոր կողմից ուղղահանգիստութեան,
որոնք ոչ թէ մեղմեցուց կը պատրաստուէին, այլ՝
ուրախ երթալու : Վարկեան մը առաջ : Բոլոր մը
առաջ կուղէին որ տեղի ունենար այդ ուխտագ-
նացութիւնը : Կեանքը, արեւը, բոլոր աշխարհ-
քը տարբեր բան մը դարձած էր անոնց աչքին :

Կոնստ. ահա՛ իրենց հոգեւոր ամբողջ տը-
րամագրութիւնը :

Նը հարցապնդում մը ուղղել՝ Հա-
յոց արդի կացութեանը վրայ :

* * * Իսկ վերջին պահուն կիմա-
նում որ վերակազմեալ Հիշակեան
կուսակցութիւնը նոյն մը զրկած
է Քաւրէններ, Պ. Լուպէիս և
Զարին ուղղեալ, հրապարակով ֆը-
րանսական և ռուսական կառավար-
ութեանց ուղղութիւնը չա-
յտարարելու արդի կացութեան վրայ
և առաջարկելով որ այդ երկու
կառավարութիւնները նախաձեռ-
նութիւնը անեն անկողինի գոր-
ծունէութեան մը՝ Հայկական խրե-
զիրը արմատապէս լուծուեալ հա-
մար : Ինձի կը հաղորդեն թէ
Ֆրանսացի կարեւոր անձնաւոր-
ութիւններ իրենց աջակցութիւնը
խոստացած են օրակէսի տեղ
նոյնը նկատողութեան տեսակով :

* * * Պ. Տէրբասէ որոշած է գործել
ի նպատակ Հայոց : Այդ մասին ար-
դէն տեսակցութիւն մը ունեցած
է Ռուսիոյ արտաքին գործոց նա-
խարար Լուստոյ ֆի Կոմարին հետ :
Եւ ամենատարագ աղբիւրէ կը յա-
ղորդեն թէ Պոլսոյ ռուսական դես-
պտը Պ. Զինովիէֆ, այդ տեսակ-
ցութեան հետեւեալքով որոշուած
է Բարիկ կոնչուի :

Պ. Զինովիէֆի ի մօտոյ Բարիկ
երթալու լուրը արդէ աղբիւրներէ
ալ հաստատուած է :

— Բարիկի մէջ Հայկական եկե-
ղիցի մը կառուցանելու խօսքը
գործնական ճամբայ մէջ գտնու-
ած է : Տիար Մանթաշեանց Ժան Կու-
ժոն փողոցին մէջ, 400,000 ֆը-
րանկի գնովին մը գնած է, և չի-
նութեան համար ճարտարապետ
կարգուած է Բարիկի Մեծ Օրե-
րան կառուցանող Շարլ Կարթիէի
օգնէն, որուն պիտի աշխատակցի
հայ աշխատակազմի Պ. Մարտի
Պէզիկ ճեման :

— Հիւանդի մը «Ռէպորթ»-ի գոր-
ծակալութիւնն է :

Խորհրդէ եկած արժանահա-
ւատ տեղեկութիւններէ կը հա-
տարար թէ, այս վերջը՝ Հայկա-
կան ջարդերը կարգադրուած է
թաք-Քրդական գողտիւնի բնիկ-
ութեան մը, որ կը յաւայ թէ
Եւրոպայի ջարդերէն յազուելով
միջամտութիւն չեն, ու բարեկար-
գէ այժմու օսմանեան վատ կող-
մամբարութիւնը : Այդ բնկերու-
թեան կեդրոնատեղին է Պիլիկ :

— Վանայ օրաւոցին տեսուչ
Գալուպեան գալովական ըն-
թացի մը մէջ գտնուած ըլլալուն
պատճառաւ, Պատրիարքարանէ
հեռագրուած է տեղւոյն առաջ-
տեղապահին միջապէս հրաժա-
րեցնել յիշեալ տեսուչը :

— Տատեան Յարութիւն փաշան
ճանապարհ հիւանդ է : Զինք դար-
մանող Տօք. Խորասանճեան հի-
ւանդի վիճակին համար մտահո-
գութեան մէջ ըլլալով, բժշկական
խորհրդակցութիւն տալու արհա-
մ է :

— «Թաքմաղ»-ի Բարիկի թղթա-
կիցը հետեւեալ տեղեկութիւնները
հաղորդած է Զարին ի Բարիկ տե-
սակցութեանց առթիւ :

Զարին, Հանրապետութեան նա-
խագահին, ու նախարարներուն
մէջ տեղի ունեցած խօսակցու-
թեան զխաւար նիւթերն էին Ա-
րեւելեան և Թուրքիոյ արեւել-
եան խեղդանքը, Ֆրանսայի և
Թուրքիոյ յարաբերութեան խը-
ղուած թուրքիոյ վայրէջում բա-
նկանքը կարեւորութիւնը, օրակէս
զի իր պարտականութիւնները ճշ-
գութեամբ գործադրել, և Տէրու-
թեանց մէջ տեղի ունեցած յա-
խաճածութիւնները վերցնելու պէտ-
քը, օրակէսի կարողանան Սուլ-

թանին վրայ պէտք եղած ազդե-
ցութիւնը բանեցնել :

Հայկական խեղդանքը և մէջտեղ
բերուեցաւ, և Ռուսիա որ ժամա-
նակին, ապաքին կոտորածներու
տանն, ազգու միջամտութիւննե-
րու արդիւք կղաւ, այսօր կը յայ-
տարարէ թէ այլ ևս անկարելի է
է որ՝ նոր պայմաններու գէման.
տարբեր մնայ և թէ Հայերը եր-
կու ճամբայ ունին բնորոշիք —
կամ Ռուսական պաշտպանութեան
տակը մտնել և կամ մնալ ներկայ
անտանելի կացութեան մէջ :

«Թաքմաղ» տօր գրաւ կրկար
խմբագրական մը նուիրելով կըսէ
թէ՝ Ռուսիոյ Զարին կ'ըլանէ հա-
յոց եղած առաջարկութիւնը այ-
սինքն «կամ Ռուսիոյ պաշտպա-
նութեան ներքեւ մնալ և կամ ներ-
կայ վիճակին մէջ շարունակել»
հայոց համար զգուշ ընտրու-
թիւն մըն է, ընտրութիւն մը,
որ եթէ նոյն իսկ ընէին շատ մը
զգուշութեամբ խնդրու կարող է ա-
ռաջնորդել զիրենք :


Ս Ի Ս Թ Է Մ Ս Ի Ն Կ Է Ր

Տիֆլիզ Մաքիմալ

Մաքիմալն Կարաբաղի օլտերմըզ
«Արաբիկ Սիւնէթ» տիֆլիզ մաքիմա-
լարը Վառնապոս Պալմաճըրար չարչու-
սընտա 233 նոմէրով, վէ Բրավատը-
տա 385 մանիֆիստը մաղաղայա-
րը ճգտա զայն թ ուճուգ ֆիլաթա սա-
թըլմադտա օլտուզը կիպի, ֆիրմա-
մըզլա սաթըլան մաքիմալարըն գու-
սուր վէ զաքաթընա բարաթըզ պաղը-
լըր :

Մայնթիմիզտէ պուլուան մանիք
պիւր մաքիմալար հէր նէվի մաքիմալար
ուճուգ ֆիլաթա թամիք իսէր, սա-
թըն ալըր, վէ թրամա իսէր :

Միֆայիլ Ս. Գապա ուլեան
(Զիյեֆնի օղլու)



Կոնստ. ահա՛ իրենց կեանքին ամբողջ ի-
տեպականը :

Կոնստ. ահա՛ իրենց ամբողջ երջանու-
թիւնը : Ո՛չ ծնողք, ո՛չ ազգական եւ ոչ սիրելի
մը կը տեսնէին, այլ տեսականորէն տարբեր գո-
յութեան մը մէջ կայեղէին, տարբեր աշխարհի
մը մէջ փոխադրուած էին ամենքն ալ եւ տարբեր
կեանքի մը կապուած էին անգրգուշի կախով մը :

Ու օրերը, ժամերը, րոպէները չէին սահեր,
այլ կարծես թէ արիւններու կը փոխուէին այդ
անմահ անձնուանքներու աչքին . . .

Այս վիճական վարկեաններու մէջ ի՞նչ կընէր
թուրք կառավարութիւնը դէպի ու՛ր յ առ-
էր ոտակեանութեան աչքը :

Աստ Էս'ձ գիտէ միայն թէ անտարբեր
վարմունք մը կը տեսնուէր թուրք վարկեանութեան
բանած ընթացքին մէջ :

«Օգոստոս»-ի ասան էր :

Կեդրոնական կոմիտէի դեռ Ենթակոմիտէներուն
յայտած չէր թէ ցոյցին նշան ունի՞ց պիտի զը-
րուէր. միայն թէ որոշուած էր ցոյցը կատարել
Սուլթանի գահակալութեան տարեդարձին օրը . . .

Բայց խոչնդոտ մը կար այս ամենուն մէջ :
Իմացում էր որ Հիշակեան կուսակցութիւնը,
հակառակ ամեն կերպ պայմաններու, իր որոշումն
եւ չէր ուղղած գտնուել, եւ իր կատարելիք սպա-
նութեան խորք գործադրելու բացառաւ յայտա-
բարութիւն ալ ըրած էր : Ասիկա անհրաժեշտ վի-
ժումը պիտի ըլլար իրենց ցոյցին, որովհետեւ մօտ
օրուան մէջ պիտի կատարուէր :

Ի՞նչ պէտք էր ընել . . .

Թէ Հիշակեան կուսակցութեան կամքն անդր-
գո ելի էր եւ թէ «Դրօշակ»-ի համակիրներուն վը-
ճիւրը : Ասոնց երկուքէն ո՞րն էր համակերպողը . . .
ուսելի բացայայտ խօսելով, ո՞րն էր տուեալը . . .
ըստ իս, ոչ ոք :

Վնասուող հայ ժողովուրդն էր :

— Մեր ցոյցը հայութեան ճակատագրին հետ իրադ-
ցող Պատրիարքական փոխանորդ Բարթոլոմէոսի
մը դէմն է, կ'առարկէին Հիշակեանները, հետե-
ւաբար որոշուած ու վճռուած էր չըստպանել :

— Մեր ցոյցը մեծ ու ահալին գահադաշնութիւննե-
րով պատրաստուած ցոյց մըն է, կը գրէին «Դրօ-
շակ»-ի համակիրները, հետեւաբար անպայման եւ
վճռական է, եթէ օր մը յետաճգուի, այլեւս վի-
ժած է ան :

Ահա՛ այս հակադէմ, անագորոյն ու մահա-
ւանդ ճիւղաւորին առարկութիւններն էին զորս
երկու կուսակցութիւնները նեղեցին իրարու երե-
սին այնպիսի ճգնաժամի մը մէջ, ուր հայ ժողո-
վուրդը արցունքի տեղ իր երակներու արիւնը կը
քամէր :

Սուկալի՛ իրականութիւն

Ու այդ պատճառաւ «Դրօշակ»-ի համակիրներու
ցոյցը բոլորովին տարբեր ուղղութեան մը մէջ զը-
րուեցաւ :

Օգոստոս տասնեակի յորդուեցաւ ր ցոյցին
նշանը յարձակողական խումբի մը կողմէն ալճակ-
ուէր Մայրաքաղաքին ամենէն աւելի կեդրոն հա-
մարտող արեւաբանին, հակառակ իրենց նախորդ
որոշմանը :

(Շարունակելի)

Печатница „Взаимность“, Варна